Արձանագրություն N 4
ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-26/38 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
«Սպորտային գույքի գնման»

ք. Երևան 02 նոյեմբեր 2026թ
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի
նախագահ՝ Էլբակ Էլբակյան
անդամներ՝ Արթուր Գալստյան
Անահիտ Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

Ընթացակարգի հայտի վերագնահատման մասին

(Է. Էլբակյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1. Հանձնաժողովի նախագահ Է. Էլբակյանը տեղեկացրեց, որ 28.10.2026թ. ստացվել է «Արմբուիլդգրուպ» ՍՊԸ-ի գրությունը, որով վերջինս ներկայացրել է առարկություններ ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-26/38 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում իր հայտը մերժելու վերաբերյալ՝ խնդրելով վերանայել հանձնաժողովի 19.10.2026թ. արձանագրությամբ ընդունված որոշումը:

1.2. Հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակցի գրությունը, սկզբնական հայտի կազմում ներկայացված 29.09.2026թ. լիազորագիրը, ընկերության պետական գրանցման տվյալները, ինչպես նաև 14.10.2026թ. և 19.10.2026թ. հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, արձանագրեց հետևյալը.

- «Արմբուիլդգրուպ» ՍՊԸ-ի կողմից 29.09.2026թ. տրված լիազորագիրը ներկայացվել է գնման ընթացակարգի սկզբնական հայտի կազմում:
- Լիազորագրով Վահե Մարտիրոսյանին վերապահվել է լիազորություն՝ մասնակցի անունից անհրաժեշտ գործողություններ կատարելու Armeps, gnumner.minfin.am և eauction.armeps.am էլեկտրոնային համակարգերում:
- Լիազորագրում նշված չէ դրա գործողության ավարտի ժամկետը:

1.3. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ և 322-րդ հոդվածները, արձանագրեց, որ լիազորագիրը տրվել է իրավասու անձի կողմից, պարունակում է դրա տրման ամսաթիվը և լիազորությունների շրջանակը, իսկ գործողության ժամկետի բացակայության դեպքում, օրենքի ուժով, այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Հետևաբար, 29.09.2026թ. տրված լիազորագիրը 14.10.2026թ. դրությամբ հանդիսացել է գործող լիազորագիր:

1.4. Հանձնաժողովն արձանագրեց, որ 14.10.2026թ. նիստի ընթացքում արձանագրված անհամապատասխանությունը՝ լիազորագրում գործողության ժամկետի բացակայության մասով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի համաձայն, ինքնին չէր կարող հիմք հանդիսանալ լիազորագիրը անվավեր համարելու և մասնակցի հայտը մերժելու համար:

1.5. Հանձնաժողովը հաշվի առավ նաև, որ էլեկտրոնային աճուրդի ավարտի արդյունքներով «Արմբուիլդգրուպ» ՍՊԸ-ն առաջին տեղն է զբաղեցրել 1-ին չափաբաժնի մասով՝ ներկայացնելով 19 800 ՀՀ դրամ գնային առաջարկ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 26-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ և 322-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության

2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգով և էլեկտրոնային աճուրդի իրականացման առանձնահատկություններով՝ հանձնաժողովը որոշեց.

1. «Արմբուիլդգրուպ» ՍՊԸ-ի 28.10.2026թ. գրությունը բավարարել՝ լիազորագրի գործողության ժամկետի բացակայության վերաբերյալ ներկայացված փաստարկների մասով:

2. Արձանագրել, որ «Արմբուիլդգրուպ» ՍՊԸ-ի կողմից սկզբնական հայտի կազմում ներկայացված 29.09.2026թ. լիազորագիրը, հաշվի առնելով դրա տրման ամսաթիվը, լիազորողի իրավասությունը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի պահանջները, 14.10.2026թ. դրությամբ հանդիսացել է գործող և իրավաչափ փաստաթուղթ:

3. Վերանայել 19.10.2026թ. արձանագրությամբ ընդունված՝ «Արմբուիլդգրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը՝ հաշվի առնելով, որ լիազորագրի գործողության ժամկետի բացակայությունը չի հանդիսացել դրա անվավերության հիմք:

4. Չեղարկել 19.10.2026թ. արձանագրության 1-ին և 2-րդ կետերով ընդունված որոշումները, այն է՝ «Արմբուիլդգրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի 8.11-րդ կետի հիման վրա անբավարար գնահատելու և մերժելու, ինչպես նաև 1-ին չափաբաժինը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշումները: 1-ին չափաբաժնի մասով «Արմբուիլդգրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել ընտրված մասնակից:

5. Երկրորդ չափաբաժնի մասով 19.10.2026թ. արձանագրությամբ ընդունված՝ «ՄՄ 55» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը թողնել անփոփոխ:

6. Ընտրված Մասնակիցներին, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ Էլբակ Էլբակյան

Անդամներ Արթուր Գալստյան

Անահիտ Կարապետյան

Քարտուղար Լուսինե Ավետիսյան